

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՎԿԱ (ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՆՈՐՈՒՅԹ)

Գալյա Դավիդովա

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դանիել Բեկ Փիրումյան փող. 1

Էլ. հասցե՝ galya.davidova.60@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 16.12.2021, գրախոսվել է 04.03.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.1-292

Ներածություն

Հայոց ազգագրության թանգարանի (ՀԱԹ) հարսանյաց հրավիրատոմսերի հավաքածուն հնարավորություն է տալիս ծանոթանալու XIX դ. վերջի, XX և XXI դդ. հրավերքի մշակույթին, ինչպես նաև ստանալ արժեքավոր տեղեկություններ ազգաբանության, մշակութաբանության և լեզվաբանության (նաև գրելաոճի) մասին: Հոդվածը հրավիրատոմսի՝ որպես հետազոտության առարկայի ուսումնասիրության առաջին փորձն է հայոց ազգագրության բնագավառում և արժևորվում է թե՛ գեղագիտական ճաշակի և թե՛ մշակույթի այս տարատեսակին՝ հրավերքի վարվելակարգին հաղորդակցվելու տեսակետից:

ՀԱԹ-ի հավաքածուում կան այլևայլ ոլորտների հրավիրատոմսեր, որոնք ուսումնասիրել և ամփոփել ենք սույն թեմային առնչվող կատալոգում¹: Հավաքածուում հատկապես ուշագրավ են հարսանեկան հրավիրատոմսերն² ու ամուսնության վկայականները, որոնք պահպանվում են «Փաստաթուղթ» ֆոնդում: Հրավիրատոմսերը ոչ միայն ունեն մշակութային արժեք, այլ նաև բացահայտում են ազգային և ազգաբանական (ազգակցական հարաբերություններ, խնամիական կապեր) կարևոր հարցեր, սովորույթներ՝ կապված անցումային ծեսերի հետ:

Հրավիրագրերի պատմությունը ներկայացնում ենք սկսած միջնադարից մինչև մեր օրերը: Գրավոր հրավերներն ավանդաբար օգտագործվել են զանգվածային միջոցառումների՝ հարսանիքների, տարեդարձերի, ծննդյան օրերի կամ նորածիններին առնչվող իրադարձությունների հետ կապված: Այսօր հարսանեկան հրավիրատոմսերը գրեթե յուրաքանչյուր հարսանեկան արարողության անբաժանելի մասն են կազմում: Նրբագեղ, փոքրիկ բացիկները ոչ միայն հարգանքի տուրք են արարողակարգին և հյուրերին, այլև ներկայացնում են տոնակատարության թեման և որոշ չափով բնութագրում

¹ Դավիդովա 2022:

² Հրավերք, հյուրասիրություն, ճաշկերույթ, խնջույք: Հրավիրատոմս-տոմսակ՝ գրություն, որով մեկին հրավիրում են մի տեղ, հմմտ. Աղայան 1976, 905:

նորապսակներին: Ներկայացնենք հրավիրատոմսի ծագման և հրավիրատոմս բաժանելու սովորույթի պատմությունը:

Հրավերի պատմությունից

Հին Հռոմում ազնվականների համար ընդունված վարքաձև էր միմյանց խնջույքի հրավիրելը: Ընթրիքի կանչելու անհատական հրավերները փոխանցվել են բանավոր զրույցի ժամանակ կամ նամակի միջոցով՝ գրված մագաղաթի կամ թղթի վրա, որը տեղ է հասցրել սուրհանդակը: Առաջին հարսանեկան հայտարարությունը թերթում տպագրվել է 1605 թ.: Գրելու արվեստին տիրապետել են միայն ընտրյալ մարդիկ, հիմնականում՝ հոգևորականները: Հարուստ ընտանիքները նամակների տեքստերը գրել հանձնարարել են վանականներին³, որոնք այդ նամակները գրել են գեղագրության և վայելչագրության կանոններով:

Պաշտոնական միջոցառումների գրավոր հրավերները հայտնի են դեռ միջնադարից: Առաքումը իրականացրել է հանձնակատարը: Առաքման համար հրավիրատոմսը մի քանի տակ ծալել են, մի քանի տեղ կնքել ծալված հատվածներում, կապել քուղով և դրել ծրարի մեջ: «Աղավնիների փոստը» քաղաքակրթությանը հայտնի է դեռևս անտիկ շրջանից և օգտագործվել է ընդհուպ մինչև XIX դ. վերջը: XIX դարը փոխեց նաև հրավիրատոմսերի ձևը: Կիրառության մեջ մտան կրկնակի ծրարները (այս ավանդույթը մինչ օրս պահպանվել է Եվրոպայում, իսկ Հայաստանում կիրառության մեջ է մտել միայն XXI դարում): Փոփոխության ենթարկվեց նաև հրավերը տեղ հասցնելու ձևը:

XX դարում հատկապես գնահատվել են ծննդյան հոբելյանական (30-րդ, 50-րդ) տարեդարձերին նվիրված հրավիրատոմսերը: XXI դարում արդեն ընդունված են հարսանեկան արարողությունների համար նախատեսված փուլիկներով յուրօրինակ հրավերները, որոնք դարասկզբի նորամուծություններից են:

Հարսանեկան հրավիրատոմսի գույնի և ձևի ընտրությունը կախված է առիթից և ամուսնացող զույգի նախասիրություններից ու հնարավորություններից: Այսօր գեղագիտորեն ձևավորված, բարձրարժեք հրավիրատոմսերը հասանելի են ոչ բոլորին, քանի որ հրավիրվածների թիվը անցնում է 200-ից⁴:

Հարսանեկան ծիսական արարողությունները էթնիկ ցուցիչ են: Հարսանիքը մշակույթի մի յուրօրինակ հանրագիտարան է, որտեղ արտացոլված են ազգային մշակույթի տարբեր համալիրներ⁵: Ծեսը պատմական ու ազգագրական իրողություն է և հանդես է գալիս մարդու կյանքի ամենակարևոր անցումային փուլերում՝ ծնունդ, հասունացում, ամուսնություն, թաղում: Ամուսնությունը հայոց մեջ ընկալվել է իբրև ընտանիք կազմելու, վերարտադրվելու՝ սերնդաճը ապահովելու միակ միջոց, որն ամրագրվել է պսակադրությամբ և հարսանիքով: Հարսանեկան արարողակարգն ապահովում է տղամարդու և կնոջ կապի հարատևությունն ու ամրությունը:

³ <http://www.my-marriage.ru/org/things/istoriya-svadebnih-priglasheniy.html>

⁴ Դավիթյան 2017: Նշենք, որ մեր օրերում ձևավորված ամենաէժեք հրավիրատոմսը արժե 2000 դրամ:

⁵ Նահապետյան 2004:

Հարսանյաց ծեսը պատմաագագրական կարևոր աղբյուր է ժողովուրդների էթնիկ պատմության, հասարակական կարգի, ամուսնության ավանդական ձևերի, հավատալիքների ու կրոնական պատկերացումների, ինչպես նաև բուն հարսանյաց ծեսի պատմության հետազոտության ժամանակ⁶: Հարսանիքը ծիսական ներկայացումների մի ամբողջություն է, որտեղ մասնակից-դերակատարներից յուրաքանչյուրն անցնում է նվիրագործման խորհրդածիսական փուլը, այն զանգվածային, մեծ տոն է, որը ներառում է ժողովրդական տոների ամբողջ համակարգը: Պսակադրությունից հետո՝ եկեղեցուց դուրս գալիս, նորապսակների գլխին քաղցրավենիքի հետ ցորեն են լցրել՝ որպես առատության խորհրդանիշ, իսկ հարսի կոշիկների մեջ՝ ցորեն, գարի, որպեսզի հարսի ոտքը բարեբեր լինի այդ տանը: Տեառնընդառաջի տոնին խարույկի վրայից թռչելիս նորապսակների գլխին նույնպես ցորեն են շաղ տվել: Կարելի է թվարկել հարսանեկան ծեսերի մի քանի բաղադրիչներ՝ կապված տոների հետ. Այսպես, «փեսայի ծառը» զարդարել են կարմիր ձվով, որը Զատիկի խորհրդանիշն է, հարսանիքի նախօրյակին փեսացուի տան առաստաղը նախշել են այլուրով, որը հիշեցնում է Ամանորը: Ուսումնասիրության ենթակա առարկան՝ հարսանեկան հրավիրատոմսը, ծիսաշարի մի փոքր, բայց շատ խոսուն բաղադրիչ է, վկա, որի տողերում ամփոփվում է ազգային բազմաբովանդակ նկարագիրը:

Հրավերի մշակույթը հայոց մեջ

Հայաստանի պատմաագագրական շրջաններում ավանդական հարսանիքի հրավերները շատ բազմազան են: Դերսիմում հրավիրատոմսը բաժանել են փեսան և մակարապետը: Այն բաղկացած է եղել զույգ մեղրամոմից, փոքրիկ փաթեթով խնկից ու մի կարմիր խնձորից⁷: Այս հրավերի կապակցությամբ տարածված է «Կարմիր խնձոր չի՛մ դրկեր», «Ետևիցդ խունկ ու մոմ դրկեցի՞», որ եկար» ժողովրդական արտահայտությունները: Ժողովրդական բառախոսքի համն ու հոտը ավելի լավ են պահպանվել հարսանեկան արարողակարգում:

Ամբողջ գյուղին հրավիրելու գաղափարն արտացոլվել է այն ժամանակ, երբ հնչել է «Սահարին»՝ հրավեր-կանչի պարեղանակը: Զուռնայի կանչը ազդարարել է հարսանիքի սկիզբը: Դերսիմում նվագածուները շրջում էին գյուղամիջում՝ պարի կանչելով գյուղացիներին: Բազմության միջից մեկը ստանձնում էր հրավեր կատարողի դերը, առաջ գալով գոռում էր. «Հե՛յ, գեղը գեղվորով, տունը տնվորով, մեծով ու պուճուրով, շաբաթ իրիկուն հարսնիքի էկե՛ք»⁸: Հանձնակատարը խոսքի վերջում տալիս էր հրավիրողի տոհմանունը: Վասպուրականում հարսանիքից մեկ օր առաջ մի մարդ էին ուղարկում տնետուն շրջելու՝ հարսանիքի հրավիրելու նպատակով: Նա մի փունջ ծաղիկ ու արգասաբերությունը խորհրդանշող որևէ միրգ (խնձոր կամ

⁶ Лобачева 1981, 36.

⁷ Շազոյան 2011, 185:

⁸ Շազոյան 2011, 181:

նույն) էր տալիս հրավիրյալին՝ դրա դիմաց նրանից ստանալով որևէ ընծա: Քաղաքում հարսանիքից ութ օր առաջ փեսացուի հայրը հարսնացուի հորը նամակով հայտնում էր հարսանիքի օրը: Քաղաքային կենցաղում թղթի վրա գրված՝ մեզ հայտնի առաջին հրավիրատոմսը կիրառվել է Վանում, որտեղ հրավիրագրի հետ մի գլուխ շաքար էին ուղարկում քավորին⁹:

Նոր Բայազետի գավառում «եզմորթեքի» (մսացուի մորթի) ժամանակ փեսացուի տնից մի տարեց կին կամ երկու երիտասարդ շրջում էին գյուղում՝ համագյուղացիներին հարսանիքի հրավիրելու նպատակով¹⁰: Այստեղ հրավերը կոչվում էր «խնդրանք», իսկ հրավիրողը՝ «խնդրակ»: «Խնդրակներն» իրենց հետ վերցնում էին օղի, նախապես հաշված գդալներ, փայտե չոփեր (ծողիկներ) կամ լուցկու հատիկներ, որոնք տալիս էին հրավիրվողին: Բաժանված փայտե չոփիկների քանակով որոշում էին, թե քանի հոգու համար պետք է սեղան բացել: Հրավերն ընդունողները խմում էին մեկ կամ երկու բաժակ օղի՝ մաղթանքներ հղելով նորապսակներին և տալիս մասնակցության համաձայնությունը: Նոր Բայազետ քաղաքում հրավիրատոմսի դեր էր կատարում թղթե կտրոնը՝ հրավիրյալի անունով: Եթե հրավիրյալն ընդունում էր հրավերը, իր անվան դիմաց գրում էր «բարի է», իսկ հրաժարվելիս՝ «շնորհակալ եմ»: «Խնդրակներին» չոր միրգ կամ մետաղադրամ՝ «սև փող» էին նվիրում՝ որպես համաձայնության նշան¹¹:

Ագուլիսում հրավիրելու համար ընտրվում էր հատուկ մեկը, որը մետաքսե թաշկինակի միջից չորացած ծաղիկներ էր բաժանում հրավիրվածներին, իսկ ավարտելուց հետո թաշկինակը պահում էր իրեն՝ որպես վարձ:

Բասենում քավորը և փեսան միասին՝ զուռնայի նվագակցությամբ, շրջում էին տնետուն՝ հարազատներին հարսանիքի հրավիրելու նպատակով: Յուրաքանչյուր ընտանիքի ավագ, ընդունելով հրավերը, ի նշան համաձայնության վայելում էր նրանց ձեռքից վերցրած օղին: Շիրակի գյուղերում դիմող զուռնայի նվագակցությամբ փեսացուն և մականները (ազապները) շրջում էին տնետուն՝ բարեկամներին հարսանիքի հրավիրելու: Հրավերն ընդունելու դեպքում փեսացուի պարանոցին կապում էին մետաքսյա մի հասարակ թաշկինակ՝ «կոսպանդ»¹²: Քաղաքում հարսանիքից մի քանի օր առաջ բարեկամներին ուղարկում էին հրավիրագրեր:

Հադրութում (Արցախ) հարսանիքի առավոտյան փեսացուի մերձավոր ազգականներից մեկը տնետուն բաժանում էր հարսանիքի հրավիրված հյուրերի անուն-ազգանունները կրող թղթեր¹³: Գանձակում¹⁴, Բորչալում¹⁵, Սիսիա-նում փեսացուի տնեցիների բերած նվագողները¹⁶ տան կտուրում հնչեցրել

⁹ Լալայան 1910, 149:

¹⁰ Լալայան 1907, 18:

¹¹ Լալայան 1907, 19:

¹² Մխիթարեանց 1901, 243:

¹³ Լիսիցյան 1981, 45:

¹⁴ Լալայան 1988, 358:

¹⁵ Լալայան 1903, 227:

¹⁶ Լալայան 1898, 224:

են դիոլ-գուռնան՝ տղամարդկանց հրավիրելով հարսանեկան ընթրիքի: Դա կոչվում էր «կանչ»: Հայաստանի որոշ շրջաններում հարսանիքի նախօրյակին, որպես հարսանեկան հրավիրատոմս, հաց կամ գաթա էին տանում հարազատ-ազգականներին, դրկից-հարևաններին: Արաբկիրում հարսանիքի նախօրյակին նախշած տափակ հաց՝ «բաջուկ» էին ուղարկում բարեկամներին¹⁷, իսկ Սեբաստիայում՝ իբրև հրավերի նշան, թխում էին հատուկ գաթա՝ «գաթախատիք»¹⁸: Հարսանեկան ծեսերում գաթան և՛ ինքնատիպ հրավիրատոմս էր, և՛ ամուր ընտանիքի խորհրդանիշ:

Նոր Նախիջևանում հարսանեկան գաթան «թել» գաթա են անվանել: Մակարներից 2-3 հոգի, գաթան խուրջիներում լցրած, շրջում էին բարեկամների տներով և բաժանում այն՝ որպես հարսանիքի հրավեր:

Գամիրքում¹⁹, Ամասիայում գյուղին դիոլ-գուռնայով ազդարարում էին հարսանիքի սկիզբը²⁰, իսկ ազգականների տները գնալը և հայտնելը կոչվում էր «տուն ձենել»:

Գողթան գավառում փեսացուի տատները, թաշկինակի մեջ ծաղիկներ դրած (ծմռանը՝ չորացած, ամռանը՝ թարմ), շրջում էր տնից տուն և նրանց մի-մի փնջիկ տալով՝ հրավիրում հարսանիքի²¹:

Բաղեշում²², Աշտարակում՝ կոչնակները²³, իսկ Վայոց ձորում՝ կանչողներն էին հարազատ-բարեկամներին հրավիրում հարսանիքի²⁴:

Վերոշարադրայից կարող ենք եզրակացնել, որ ամեն մի շրջան (նույնիսկ կողք կողքի գյուղերը) ուներ հրավերի իր ծեսը: Սա փաստում է այն մասին, որ վերաբնակվածները պահպանել են իրենց վաղեմի սովորույթները:

Եվրոպայում (Գերմանիա, Անգլիա) հրավերներն առաքվել են ձիով: Նմանատիպ պատմության հանդիպում ենք Ղզլարում²⁵, որտեղ հրավիրատոմսերը բաժանելու համար հատուկ ձիավոր-ցրիչ էին վարձում:

Ինչպես խնամախոսության ժամանակ միջնորդ կինը, այնպես էլ հրավիրատոմս բաժանողն անպայման վարձատրվում էր փեսացուի կամ հարսնացուի հարազատների կողմից: Հրավիրատոմսում նշվում էր, թե որ եկեղեցում պիտի տեղի ունենար պսակադրության հանդեսը, և հրավիրվող պարոնն ու տիկինը իրենց ներկայությամբ պիտի հարգեին պսակի հանդեսը և մասնակից լինեին հարսնախնջույքին՝ նշված հասցեում:

¹⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 165:

¹⁸ Հմմտ. Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 228:

¹⁹ Թեմուրճյան 1970, 115:

²⁰ Հմմտ. Բարբառային բառարան 2002, 401 (ծենտուք-հարսանիքի, խնջույքի հրավեր):

²¹ Լալայան 1905, 125:

²² Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 148:

²³ Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, 140:

²⁴ Լալայան 1906, 152:

²⁵ Գևորգյան 1980, 49:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Նոր Նախիջևանում²⁶, Վանում հարսանիքի էին հրավիրում տպագրված հրավիրատոմսակներով²⁷:

Պսակը ամուսնության գլխավոր խորհուրդներից մեկն է: Ամուսնությունն այլ կերպ անվանում են պսակ (ամուսնացել է, պսակվել է): Եկեղեցում կատարվող պսակադրության ժամանակ նորահարսի ու նորափեսայի գլխին թագ կամ պսակ էր դրվում: Շիրակում փեսացուն պսակադրության ժամանակ կրում էր թագի պատկերով արծաթյա գոտի: Նմանատիպ գոտի ներկայացված է ՀԱԹ-ի ցուցադրությունում: Գոտու ճարմանդի վրա առկա է թագի զարդապատկերը և Պ.Վ. մակագրությունը (նկ. 1): Հավանաբար, դա փեսացուի կամ պսակվող զույգի անվանատառերն են²⁸: Գոտին՝ որպես մոգական շրջանակ, ունեցել է հմայական պահպանակի նշանակություն և կրողին պահպանել է չարից²⁹:

Ավանդական հարսանիքում հարսին ու փեսային անվանում էին «թագուհի-թագավոր»․ հարսանիքում ծագած վեճերը նրանք են լուծել: Փեսան տուգանել է բոլոր անհնազանդներին և կարգազանցներին, իսկ հարսն իրավունք է ունեցել տուգանել միայն աղջիկների խմբին: Հարսանիքի օրը նորապսակները կրել են թագավորական բազմաթիվ տարբերանշաններ՝ թագ, գավազան, քող, նարոտ, ոսկապ, ծաղիկ: Նույն թեմայի դրսևորումը տեսնում ենք հարսանյաց հրավիրատոմսերի ձևավորման մեջ: ՀԱԹ-ի «Փ» 190/6252/15 հաշվառանիշի հրավիրատոմսի (Նոր Նախիջևան, 1875 թ.)³⁰ գլխամասում պատկերված է թագ (նկ. 2): Ավանդական հարսանիքների ժամանակ պսակադրված զույգերի վրա եկեղեցուց դուրս գալիս ցորենի հատիկներ են շաղ տվել՝ ակնկալելով առատություն, բարիք, սերնդած և պտղաբերություն: Որոշ հրավիրատոմսերի գեղազարդման մեջ կան ցորենի հասկեր:

Հրավիրատոմսերի աշխարհագրությունը տարածաշրջանային ընդգրկման առումով լայն է՝ Երևան, Թիֆլիս, Արցախ, Նախիջևան, Դոնի Ռոստով, Եկատերինոդար: Դրանց մեծ մասը թանգարանը ձեռք է բերել 1985 թ. Դոնի Ռոստովի գիտարշավից:

Հրավիրատոմսերն աչքի են ընկնում ոչ միայն ձևի և բովանդակության բազմազանությամբ, այլև պարունակող տեղեկատվությամբ, որը վերաբերում է ոչ միայն բուն հարսանյաց հանդեսին, այլ նաև այնպիսի ոլորտների, ինչպիսիք են ազգակցական հարաբերությունները, ամուսնացողների կամ խնամիացող ընտանիքների սոցիալական վիճակը, կրթական մակարդակը և այլն: Հրավիրատոմսերի մեծ մասը երկլեզու է կամ ռուսերեն: Կիրթ ու մտավորական մարդիկ տիրապետել են եվրոպական մի քանի լեզուների:

²⁶ Շահագիզ 1901, 87:

²⁷ Լալայան 1910, 149:

²⁸ Նույն ցուցադրությունում ներկայացված են սափոր և սկուտեղ, որոնց վրա եղած մակագրություններից տեղեկանում ենք, որ դրանք նվիրել է փեսացուի հայրը իր որդուն՝ հարսանիքի կապակցությամբ:

²⁹ Ստեփանյան 2007, 16-20:

³⁰ Հրավիրատոմսի համարակալումը ՀԱԹ-ի «Փաստաթուղթ» ֆոնդին է:

Այս տեսանկյունից առանձնանում են Դոնի Ռոստովի, Նոր Նախիջևանի XIX դարի վերջի և XX դարասկզբի մի քանի հրավիրատոմսեր, որոնք հազվագյուտ տեղեկատվություն են պարունակում հայ իրականության մասին, թե՛ վերոհիշյալ բնակավայրերում ինչ ազգատոհմեր են ապրել, խնամիացել ու բարեկամացել, ամուսնացողները միաժամանակ կրել են և՛ մայրական, և՛ հայրական ազգանունները, ինչպես՝ Նեկտարինե Կարապետյան-Մնացականյան, Միքայել Հայրապետյան-Մելգումյան և այլն:



1



2



3



4

Նկ. 1-4. Հրավիրատոմսերի օրինակներ Հայոց ազգագրության թանգարանից

Հրավիրատոմսերում նշվում էին հարսի ու փեսայի անուն-ազգանունը, եկեղեցին, որտեղ կատարվելու էր պսակադրությունը, այնուհետև հարսանյաց խնջույքի տարեթիվը, ժամը (առավոտյան, երեկոյան), հասցեն և պարահանդեսի տեղը, երբեմն՝ նույնիսկ կայարանը, որտեղից հարսանեկան թափորը տեղափոխվելու էր այլ վայր:

Որոշ հրավիրատոմսեր պարունակում են տվյալներ միայն պսակադրության, եկեղեցու վայրի և ժամի մասին: 193/6285/34 հաշվառանիշի հրավիրատոմսից տեղեկանում ենք, որ պսակադրությունը տեղի է ունեցել Նա-

խիջևանի Սուրբ Աստվածածին եկեղեցում: Պսակադրություններ են կատարվել նաև Նոր Նախիջևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Համբարձում, ինչպես նաև Եկատերինոդարի հայկական եկեղեցիներում:

Ուշագրավ է 268/8118 հաշվառանիշով հրավիրատոմսը, որից տեղեկանում ենք, որ Արցախյան հերոսամարտի մասնակից, Հայաստանի Հանրապետության և Արցախի ազգային հերոս (1996) Մոնթե Մելքոնյանի (Ավո, 1957-1993) և Սեդա Գպրանյանի Սուրբ պսակի խորհուրդը կայացել է Ս. Գեղարդի եկեղեցում՝ 1991 թ.:

Որոշ հրավիրատոմսեր նշանադրության հրավերի հետ մեկտեղ տեղեկություն են հաղորդում նշանվողի՝ որդեգիր լինելու մասին: 6252/190/11-ից տեղեկանում ենք, որ Միքայել Բարսեղյան և Աննա Հովհաննիսյան-Բեշքենյանները հրավիրում են իրենց որդեգրուհու՝ Պետրոնիա Հովհաննիսյան-Չերկեսյանի և Գևորգ Կարապետյան-Խորճյանի պսակադրությանը (նկ. 3): Ըստ 190/6283/14-ի (Դոնի Ռոստով, 1896)՝ պրն. Լուսեղյան-Բադրյանը հրավիրում է դստեր՝ Վարդուհու և Մկրտիչ Հարությունյան-Արմաքեշյանի նշանահանդեսին:

Նշանդրեքի արարողության հրավերների հանդիպում ենք ոչ միայն XIX, այլ նաև XX դ. հրավիրատոմսերում (209/6650/59 հաշվառանիշ, Ալավերդի, 1956): Կան երկու խնամիացող բարեկամների համատեղ հրավերով հրավիրագրեր: 6252/190/18 հաշվառանիշի հրավիրաթղթի առաջին էջում նշված է, որ Եվդոկիա Արտեմովնա Կեչեջևան հրավիրում է իր որդու՝ Կարպ Եգորովիչի, մյուս էջում՝ Աննա Վլադիմիրովնա Կորոտկովան իր դստեր՝ Եվդոկիա Իվանովնայի պսակադրությանը:

Հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Բանանց գյուղի (Գարդման-Ուտիք) Տեր-Ավետիքյանների հրավիրաթուղթը (1903)՝ նշված են բուն հարսանիքի օրերը՝ հինգշաբթիից կիրակի (4 օր): Սա ևս փաստում է այն իրողությունը, որ հայոց մեջ ավանդական հարսանիքը նշել են «յոթ օր յոթ գիշեր»³¹: Կիլիկիայում ամուսնացող աղջիկները բուսական և թռչնային մոտիվներով համակցված յոթ ճերմակ շուշաններով զարդարված, սպիտակ ժանյակե ժապավենի վրա պատրաստված օղակաձև թագ են կրել³²: Այս դեպքում թագը խորհրդանշում է զուգավորում, արգասավորություն, բեղմնավորություն:

XIX դ. հրավիրատոմսերը պատրաստված են գեղագիտական բարձր ճաշակով: Մեծ մասը փղոսկրագույն է՝ հարդարված ժանեկանման կտրտված հավելումով, դրոշմազարդ ծաղիկներն ավարտվում են զույգ ամուսնական մատանիների կամ թռչունների պատկերներով: Մեկ այլ՝ «Փ»190/6252/12 հաշվառանիշի հրավիրագրի (Նոր Նախիջևան, 1905) վրա պատկերված է տնակ՝ ծաղկանոցով, որը փաստում է նորապսակներին ուղղված ցանկությունների մասին՝ տանիք, տուն ունենալու միտմամբ: Այսպիսի ժողովրդական

³¹ Շադոյան 2011, 194, Նահապետյան 2004, 151, Մխիթարյան 20018, 164:

³² Փափազյան 2002, 19:

բարեմադրանք կա՝ ուղղված աղջկան. «Տուն-տանիքով տղի ռաստ գաս (հանդիպես)»³³:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հրավիրատոմսերը հայ իրականության մեջ քաղաքային մշակույթի բարձրարժեք փաստաթղթեր են, որոնք բացահայտում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ տեղեկություններ ազգի, ընտանիքի, ամուսնահարսանեկան ծեսերի, ժառանգորդության մասին:

XX դ. հրավիրատոմսերը ձևավորված են զույգ մատանիների («Փ» 126/4257/1, «Փ» 126/4857/2, «Փ» 130/4975/2), զույգ ծաղիկների և համանման այլ պատկերներով³⁴: Դրանց բնորոշ են նորապսակների անուն-ազգանունները, զույգերի լուսանկարը («Փ» 110/4601/1, 3, 9), երբեմն էլ հանդիպում են պտղաբերության խորհրդանիշներ: XX դ. 50-60-ական թթ. Որոշ նմուշներ ձեռագիր են՝ գրված աշակերտական տետրից կտրված թղթի վրա (Փ» 209/6650/59 հաշվառանիշ, Ալավերդի, 1956):

Խորհրդային տարիներին ընդունված էր մեծ շուքով՝ թողնելով ու ծոռնելով, ամբողջ գերդաստանով նշել ծնողների հոբելյանական հարսանիքները (25, 30, 50): Այդ առիթով ևս հրավիրատոմսեր են բաժանել: Հավաքածուում ընդգրկված են արծաթյա՝ «25» տարի (104/4515 հաշվառանիշով Սիրանուշ-Վաղարշակ՝ 1936-1961) և ոսկյա՝ «50» տարի, (103/4514 հաշվառանիշով՝ Մերի-Սարգիս) գրություններով օրինակներ:

Յուրաքանչյուր ընտանիք ունի իր պատմությունը, որը հաճախ սկիզբ է առնում հարսանեկան խնջույքից: Այս գեղեցիկ արարողության մասին որպես իրական հուշ են մնում հրավիրատոմսն ու լուսանկարները, որոնք պահպանվում են որպես ընտանեկան մասունք՝ վկայելով այդ հիշարժան օրվա մասին:

Ժամանակի ընթացքում փոխվել է նաև հրավիրաթղթի ձևը: Ներկայումս տարածված են լազերային կտրվածքով, քրաֆթային ոճով՝ ծրարով և կապարե կնիքով (այս տիպը հիշեցնում է միջնադարյան հրավիրատոմսերը), ինչպես նաև այլ հրավիրատոմսեր: Հարսանեկան սովորույթները ևս կրել են զգալի փոփոխություններ: Փոխվել են նաև ավանդական ծեսերը: Ծեսը մեզ չի հասել իր սկզբնական բովանդակային ձևով: Ավանդական հարսանեկան ծիսաշարքից պահպանվել են միայն որոշ ծեսեր: Օրինակ, եթե անցյալում ափսե դրել են միայն փեսացուի ոտքի տակ, որպեսզի նա մեկ հարվածով կտորի այն, ապա այժմ երկու ափսե են դնում. փեսացուի և հարսնացուի ոտքերի տակ՝ միաժամանակ կտորելու համար: Վերապրուկային այս ծեսով փորձում են հասկանալ, թե ով իշխող դիրք կունենա ընտանիքում: Ակնում, Արաբկիրում, Աղձնիքում սկեսուրը հարսին դիմավորել է հետևյալ խոսքերով. «Հարսս, ոտքդ երջանկաբեր, գլուխդ՝ բախտավոր լինի», և սկեսրայրի կամ կնքամոր հետ տան շեմքի մոտ ձեռքերով կամար են կապել, որ հարսն ու փեսան անցնեն դրա տակով՝ ի նշան հնազանդութ-

³³ Դավիդովա 2017, գ. Նոր Արտագերս, բանասաց՝ Շուրա Ավչյան:

³⁴ Դավիդովա 2017, գ. Արաքս, բանասաց՝ Սուսան Մխիթարյան:

յան: Դրա արձագանքը հաճախ տեսնում ենք XX դ. հրավիրատոմսերի (նկ. 4) դիմերեսի պատկերներում, որոնց վրա հարսնացուն ու փեսացուն պատկերված են կամարի տակ:

Հարսանեկան ծեսերից մի քանիսում քիչ թե շատ պահպանվել են ավանդականի որոշ բաղադրիչներ՝ հարմարեցնելով ներկա ժամանակներին, ինչպես՝ հարսին հագցնելը, զույգերին լավաշներով դիմավորելը, տան շեմին ափսե կոտրելը, հարսի հոր տնից նորապսակների ելքը խանգարելը, պսակադրության ժամանակ թագադրվելը, եկեղեցու բակում աղավնիներ թռցնելը: Այս ամենը ցայսօր կիրառվում է:

Եկեղեցուց դուրս գալիս նորապսակների վրա վարդի թերթիկներ, բրինձ, չամիչ, ընկուզեղեն են ցանում (արդեն մոռացվում է ցորեն շաղ տալը):

XXI դ. առաջին տասնամյակին դաշտային ազգագրական մի ուշագրավ նյութ է գրանցվել. փարիզահայ ընտանիքի հարսնացուն հարսանիքի ժամանակ նվիրել են ցորենի հասկափունջ³⁵: Այս իրողությունը ապացույց է այն բանի, որ ոչ նյութական մշակութային ժառանգության ավանդները դեռևս ապրում են մեր ծնողների հիշողության մեջ և երբեմն ենթագիտակցորեն, ակամա դրսևորվում: Հասկափունջն արդեն վերադարձ է դեպի ավանդականը՝ դեպի արմատները:

Եզրակացություններ

Այսպիսով, կարելի է ասել, որ հարսանյաց արարողակարգում որոշ չափով պահպանվել են հրավիրատոմսի ձևավորումն ու բովանդակությունը, այն առաքելու ձևը (գրավոր կամ բանավոր, նույնիսկ հեռախոսով, XXI դ. Գերմանիայում լայն տարածում ունեն տեսահոլովակները, պատկերներում ներկայացվում են հրավերի մասին մանրամասն տեղեկություններ): Այսօր էլ հարսանեկան հրավիրատոմսերը հարսանյաց արարողությունների, հարսանեկան վարվելաձևի անբաժան մասն են կազմում և պարզապես դարձել են հեռավոր անցյալից մեզ հասած գեղեցիկ ավանդույթ:

Գրականություն

- Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, Երևան, «Հայաստան», 925 էջ:
- Գևորգյան Գ. 1980, Ղզլար, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 8-67:
- Դավիդովա Գ. 2017, Դաշտային ազգագրական նյութեր, Արմավիր:
- Դավիդովա Գ. 2022, Հայոց ազգագրության թանգարանի հրավիրատոմսերի հավաքածուի կատալոգ, Երևան, տպ. Հայկ Հովսեփյանի, 161 էջ:
- Թեմուրճյան Վ. 1970, Գամիռքի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 5-141:
- Լալայան Ե. 1898, Սիսիան, Ազգագրական հանդես, գք. III, տպ. Մ.Դ. Ռոտինեանցի, էջ 207-270:

³⁵ Պապիկյան 2010, 427:

- Լալայան Ե. 1903, Բորչալուի գավառ, Ազգագրական հանդես, գք. X, Արագատիպ Ա. Մարտիրոսեանցի, էջ 197-246:
- Լալայան Ե. 1905, Գողթան գավառ, Ազգագրական հանդես, գք. XII, Արագատիպ Ա. Մարտիրոսեանցի, էջ 109-173:
- Լալայան Ե. 1906, Վայոց ձոր, Ազգագրական հանդես, գք. XIII, տպ. Հերմէս, էջ 139-166:
- Լալայան Ե. 1907, Նոր Բայազետ, Ազգագրական հանդես, գք. XVI, տպ. Հերմէս, էջ 9-68:
- Լալայան Ե. 1910, Վասպուրական, Ազգագրական հանդես, գք. XX, Էլեկտրաշարժ տպարան Ն. Աղանեանցի, էջ 196-212:
- Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., էջ 5-505:
- Լիսիցյան Ս. 1981, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 9-143:
- Հակոբյան Գ. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան», 396 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2001, խմբ.՝ Սարգսյան Ա., Հովհաննիսյան Լ., հ. Ա, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 427 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2002, խմբ.՝ Սարգսյան Ա., Հովհաննիսյան Լ., հ. Բ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 427 էջ:
- Մխիթարյան Ա. 2018, Պսակը և հարսանիքը հայոց մեջ՝ ըստ մատենագրական աղբյուրների (V-XVIII դդ.), Երևան, «Նաիրի», 336 էջ:
- Մխիթարեանց Աղ. 1901, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Գ. Սանոյեանի հրատ., 338 էջ:
- Նահապետյան Ռ. 2004, Աղծնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, ԵՊՀ հրատ., 258 էջ:
- Շագոյան Գ. 2011, Յոթ օր, յոթ գիշեր, հայոց հարսանիքի համայնապատկեր, Երևան, «Գիտություն», 616 էջ:
- Շահագիզ Ե. 1901, Նոր Նախիջևանը և նախիջևանցիք, Ազգագրական հանդես, գք. VII և VIII, տպ. Ա. Մարտիրոսեանցի, էջ 5-102:
- Պապիկյան Ս. 2010, Խաչվինջերը երկրագործական հավատալիքների համակարգում, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, խմբ.՝ Աբրահամյան Լ., Թադևոսյան Ա., Հայրապետյան Թ., Երևան, «Գիտություն», 594 էջ:
- Ստեփանյան Ա. 2007, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 22, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 16-20:
- Փափազեան Հ. 2002, Հայկական տարազ, Պողոսյան Ս., Հայկական տարազի համալիրները, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 13-27:
- Лобачева Н. 1981, Свадебный обряд как историко-этнографический источник, Советская этнография, Москва, N 2, с. 36-50.
- <http://www.my-marriage.ru/org/things/istoriya-svadebnih-priglasheniy.html> (01.02.2013) (ներբեռնման օրը՝ 24.02.2023, 14:02).

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՎԿԱ (ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ՆՈՐՈՒՅԹ)

Գալյա Դավիդովա

Ամփոփում

Հայոց ազգագրության թանգարանի հրավիրատոմսերի հավաքածուն ներառում է 250 թանգարանային առարկա (XIX-XX դդ.): Դրանց շարքում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հարսանեկան հրավիրատոմսերն ու ամուսնության

վկայականները: Հարսանեկան հրավիրատոմսերը մատնացույց են անում ոչ միայն հարսանեկան խնջույքի, այլ նաև հարսանիքը վավերացնող պսակադրության վայրը, հասցեն, հարսանեկան խնջույքի տեղն ու ժամը և այլ մանրամասներ: Հրավիրագրերը որոշ չափով արտացոլում են ազգակցական հարաբերություններ (ազգատոհմերի, խնամիական կապերի) և մշակութային արժեքներ: Դրանք պատմական տվյալներ են պարունակում Հայաստանի տարբեր պատմաազգագրական շրջաններում ավանդական հարսանիքների և հարսանեկան հրավիրատոմսերին առնչվող վարվելակարգի վերաբերյալ: Հրավիրատոմսերը հարկ է դիտարկել ոչ միայն որպես մշակութային արժեքներ, այլ նաև ազգային և ազգաբանական խնդիրների տեսանկյունից, քանի որ կապված են անցումային ծեսերի հետ: Հրավիրատոմսերի տեղեկությունները վերաբերում են ոչ այնքան բուն հարսանեկան խնջույքին, որքան այնպիսի ոլորտների, ինչպիսիք են, մասնավորապես, նորապսակ զույգի ազգակցական կապերը և սոցիալական վիճակը:

Բանալի բառեր՝ հրավիրատոմս, հրավերք, հարսանիք, ծես, ավանդույթ, խորհրդանիշ, հավաքածու:

ПРИГЛАСИТЕЛЬНЫЙ БИЛЕТ КАК СВИДЕТЕЛЬ СВАДЬБЫ (ТРАДИЦИЯ И СОВРЕМЕННОСТЬ)

Галя Давидова

Резюме

Коллекция свадебных документов Национального музея этнографии армян состоит из 250 музейных предметов (XIX-XX вв.). Среди них особый интерес представляют свадебные приглашения и свидетельства о браках. Свадебные билеты указывают не только на место проведения свадебного пиршества, но и на место, адрес регистрации семейного союза. Исследование пригласительных билетов выявляет родовые отношения (семейно-родовые, сватовские связи). В работе представлены исторические данные о традиционных свадьбах и культуре этикета свадебного приглашения разных историко-этнографических регионов Армении. Приглашительные билеты выявляют важные национальные и этнологические вопросы и обычаи, связанные с переходными ритуалами. В пригласительных билетах содержится информация не только о самом свадебном пиршестве, но и о родственных связях и социальном положении свадебной пары.

Ключевые слова – пригласительный билет, приглашение, свадьба, ритуал, традиция, символ, коллекция.

INVITATION CARD AS A WITNESS OF WEDDING (TRADITION AND NOVELTY)

Galya Davidova

Abstract

The museum of Armenian Ethnography houses 250 museum items of the XIX-XX centuries included in the collection of documents related to marriage. Wedding invitation cards and certificates are of special interest. Wedding invitation cards reveal the venue, address, church, week day, hour and other details not only of the wedding feast, but of the wedding ceremony as well. Invitation cards reflect the family ties (family, in-laws) and cultural values to some extent. They give historical information on traditional weddings and etiquette of wedding invitation in different historical-etnographic regions of Armenia. Invitation cards should be studied not only as cultural values, but as important national and ethnographic issues connected with transitional rites. Invitation cards give information mainly on the family ties and social status of the wedding couple.

Key words – invitation card, invitation, wedding, ritual, tradition, symbol, collection.